

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՑ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ

31.10.2014 14:07



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ նամակ է ուղարկել քաղաքացի Մարիամ Հակոբյանը: Նա շնորհակալություն է հայտնում փաստաբան Հասմիկ Մարտիրոսյանից բարեխիղճ աշխատանքի համար: Նամակում քաղաքացին մասնավորապես գրում է. ‘Ես` Մարիամ Հակոբյանս, ցանկանում եմ Շնորհակալություն հայտնել Ձեր Փաստաբանական պալատի անդամ փաստաբան Հասմիկ Եղնիկի Մարտիրոսյանին /արտոնագիր 1484/: Քանի որ նրա կողմից ցուցաբերված վերաբերմունքը թե մասնագիտական և թե բարոյական տեսանկյունից անգնահատելի է: Ինձ համար դժվարին պահին նա միշտ եղել է իմ կողքին, նույնիսկ այն դեպքում, երբ դա չէր մտնում իր պարտավորությունների մեջ: Նա ինձ տվեց ոչ միայն փաստաբանական օգնություն, այլ նաև հոգեբանական` հարցին վերաբերվելով որպես բարձր գիտելիքներ ունեցող և պրոֆեսիոնալ մասնագետ: Հունաստանի Հանրապետությունից գալով Երևան միայն խաբվել ու հուսախաբվել էի, հավատս կորցրել էի, որ երբևէ ինձ համար արդեն անհույս դարձած այդ գործը այսքան սեղմ ժամկետում կունենա իր դրական ավարտը: Ես շնորհակալություն եմ հայտնում Ձեզ, որ ունեք այսպիսի փաստաբան, ում կողքին քաղաքացիները իրենց զգում են ապահով և պաշտպանված: Հասմիկը բարձր մարդկային արժեքների տեր անձնավորություն է, նրա վերաբերմունքը, անսահման հոգատարությունը աննկարագրելի են: Նաև ցանկանում եմ նշել, որ Հասմիկ Մարտիրոսյանը այս ամենը արել է անվճար’:


Առաջարկվող նորություններ



22.11.2013 ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՎՈՒՄՐՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԵԼ Է ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԵՐԸ



26.11.2013 ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԱՌԿԱ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՏՎԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՒՔ ՎՏԱՆԳԵԼՈՒ ԵՆ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ Լ



18.12.2013 ՄԵԿ ՏԱՐՈՒՄ` 9-Ը ԱՐԴԱՐԱՑՈՒՄ. ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ՀԱԿՈՔՅԱՆԸ 2013-Ը ԱՆՆԱԽԱԴԵՊ ՏԱՐԻ Է ՀԱՄԱՐՈՒՄ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ



20.12.2013 ՀԱՅ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ
ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ
ՖՐԱՆՍԻԱ

```
Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```